

40
ՍԱՆԴԻՍ



40
ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

Գրութիւններ , որոնք եւ յետ դարձուի՝
պէտք է խրկել «Խոյզակ»ի վարչութեան ,
Վասն
Administration du Khousag Varna

Պարսկարիոյ համար տարեկան 10 փր .
» » վեցամսեան 5 »
Օսար երկիրներու համար տարեկան 12 »
» » վեցմսյ. 6 »

ԵՐՈՐՈՒՄԻ ԺԱՅԸ

Եւրոպան , որու վրայ այնչափ մեծ
յայտեր դրած էր մեր ազգը , այսօր
զինք կը լքանէ վատաւար . անիկայ ,
ս'չ միայն լուռ կը մնայ կանոնադրա-
պէս կազմակերպուած ու վայրագա-
լար ի գործ դրուած արիւնհանգ կու-
տորածներու առջեւ հակառակ իր վրայ
հարկ դրուած պարտականութեան ,
այլ և կը զայնալերէ անուղղակի կեր-
պով . հոս , մեծ ազգի մը նախագահն
է որ դեռ հարիւր հազար անմեղ զո-
հերու արիւնը չը չորցած այդ ոճիրնե-
րու մեծագոյն հեղինակին կենացը լա-
ծակ կըմպէ . հոն , մաշի հայրենիքի
մը ժառանգաւոր պետն է որ թանկա-
զին ու գուռ մտերմական նուէրներ
կընէ նոյն արիւնաթաթախ դադանին .
անդին մէկ ուրիշ , այնչափ գովուած
երկրի մը մեծագոյն ժողովին մեծ (•)
առննայեալ կը առաւ այն երեւոյն-
խանը , որ համարձակած էր միեւնոյն
այդ ոճիրներու հեղինակին կատարած
չունը բռնութեամբ . Տեսնելով այս տարօրի-
նակ երեւոյթները մենք ելլեմք կը հար-
ցնենք թէ ի՞նչի առիւթ եւրոպայի այս տար-
օրինակարէն վատ բնութեամբ . և ահա մեզ
կը պատահաւորապէս համը առաւոր թերթե-

րու մեծանուն խմբագիրները և խե-
լացի ու խորհող յազաւագէտները թէ
չաներնին այնպէս կը պահանջէ : Մենք
հաւարակ մահկանայուններու , այսօր եւ-
րոպայի միլիոնաւոր ժողովուրդները
վարող քաղաքագէտներու մեծ մտկե-
րուն առջեւ , որոնց անհուն-
թեանը մասին գիւթական ա-
ռապելներ կը պատմեն , չառ պարիկ
ու խեղճ արարածներ ըլլալով կ'ու-
ղենք որ մէկը մեզի գիւրդմունքի
կերպով լացատրէր ու մենք կարող լի-
նէինք թափանցել այդ մարդերու մրո-
քին ու բրած հալածութեան և հաղթանքի
թէ ի՞նչ լան է այդ շահ բռնածը , ո-
րուն համար եւրոպան այսօր այնչափ
կատորմանայ վայրագ դադանի մ'առջեւ ,
ու կը թողու որ գոհուի անցեալին և թէ
ներկային մէջ լարոյսպէս մեծ պատ-
մական ազգ մը , որ իրաւամբ կոչու-
մանի քաղաքակրթիչ գեր մը կատա-
րելու Ասիայի մէջ , ինչպէս կը վկայեն
իր ժառքը կազմող ամենէն աւելի
նշանաւոր մարդիկը : Մեզի կըսեն , անգ-
ղիոյ շահը այս կը պահանջէ , գերմա-
նիայիներ այն , իրանապիներ այն , ին-
քայց լացարշտպէս չեն հասկցներ թէ
ինչ տեսակ լան է առնոց բաժն շահը
և թէ որ դատակարարին կը պատ-
կանի : Մենք ուրիշ առթիւ թողլով

ապացուցանելը թէ և ոչ մի շահ չիկայ, բացի յիմարութենէ, որուն համեմատ եւրոպան այսօրն ստորնացաւ, և թէ շահերնիս այսպէս կը պահանջէ բւերով եւրոպայի չազաբազէտներու բրածր տոնգի շոտակաւն է, ու մենք պահ մը ենթադրելով որ իրօք շահ մը կայ, կ'ուզենք քննել ու երեւան լերել թէ այդ շահը միլիոններով հաշուող ժողովրդի՞նն է, թէ ոչ այդ միլիոններով հաշուող ժողովուրդները ոչխարներու երամի մը պէս իրենց կիրքերուն ու կամքին համեմատ վարող մի քանի ինքնակոչ ձրիակեր հովիւներուն: Ո՞վ կրնայ մեզ համոզել ու ապացուցանել որ աւելի երջանիկ ու բարեկեցիկ եղաւ այն ժողովուրդը, որուն կառավարութիւնը հողի կտոր մը աւելցուց իր արդէն տիրապետած երկրին վրայ. ահա Ռուսիան, ահա Գերմանիան, ահա Անգլիան. ուրոնք դեռ երէկ էր որ աշխարհի քարտէսը փոխեցին նոր հողեր կցելով իրենց երկիրներուն: Բացէք այս ժողովուրդներու հանգստութեան ու բարօրութեան հաշուեկշիւը և ակներեւ պիտի տեսնէք որ աւելի մեծ բաց մը գոյացած է անոնց հանգստութեան ու երջանկութեան մտից կշիռին մէջ յորմէ հետէ այդ նոր երկիրները կցուած են իրենց հողին: Գերմանիոյ ժողովուրդը ի՞նչ շահեցաւ Ալգաւ Լաւէնը առնելով, եթէ ոչ հարիւր հազարներով հաշուող իր թաքմ գաւակներուն կորուստը և այն արիւնոտ խոցերը ու վշտերը զորս կրեցին այդ գաւակները կորնցնող մայրերն ու քոյրերն. պակեցած մի թէ այդ կերպով անօթիներու, թշուառների, սամեհածանր աշխատութիւններով մաշողներու, յուսահատութեամբ անձնաւորան եղողներու թիւը. նոյն լանը չեղա՞ւ մի թէ Ռուսիայի. գալով անգլիայի, Կիպրոսն ու Յելլադոսն ինչ առաւելութիւններ լերին այդ ժողովրդին:

մի թէ հանգերու մէջ, գործարաններու մէջ չարաչար աշխատող և անշնթութեան պատճառաւ իր պատիւը ծախողներու և ամեն կարգի աւրուկներու թիւը պակեցաւ թէ աւելցաւ: Ինչ լաւ կը լինէր եթէ ժողովուրդները ճանչնալու աշխատէին ինքրիկներին և դանազանէին ու որոշէին իրենց շահերը քանի մը մարդերու շահէն, և կուրբէն գործիք չը լինէին իրենց աշխատութեամբ իրենց վրայ տիրապետող ինքնակոչ ժառանգաւոր իշխաններու կամ իբր թէ ազգին կամ գովրդի բերնը կառավարող անպիտաններու, որոնց լոյսը անհոգապէս անհոգաբար էր լան չէ, լայց եթէ ժողովուրդները ժողովուրդներու գոհել և ատով իրենց կրքերն ու փառաւորութիւններն գոհացնել, ուրկէ ժողովուրդները երբէք բան մը չեն շահիր, այլ կ'ունենան իրական անդարմանելի կորուստներ, ուրոնք երբեմն դարերով չեն տեղը դարձնէր կը կարծենք որ ալ ժամանակ է որ ժողովուրդները լրջօրէն մտածեն իրենց շահերուն վրայ և դանազանելով զայն մի քանի մարդերու պատկանող և այն ալ երեւակայական շահերէն, ու աշխատին իրենց շահերուն, չը խալտելով Եւրոպայի մէջ մեծ մեծ դէպքեր բռնող և շարունակ ժողովուրդը խալող թերթերէ, որոնք շողջողուն բառերով ուղած ժամանակներն ժողովուրդին վայրենի կիրքերը կը վառեն զայն տիրող մարդերու ձեռք գործիք դառնցնելու համար, և ուղած ժամանակներն այլ և այլ առտերով ժողովրդին վառ դժգոհումներուն վրայ չուր կը թափեն երբ նա ինքնաբերաբար վառած է անմեղներու դէմ եղած վայրենիութիւններու ու վայրագութիւններու դէմ:



Ի՞նչ է ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

(Շար. նախորդ քննիչի եւ վերջ)

Ինչո՞ւ արդարեւ պետութիւնը՝ իր ճարտարագէտներով, իր գործակալներով, նուազ կարող պիտի ըլլար արհեստագործութիւնը վարելու քան թէ այն ճարտարագէտները եւ գործակալները, որոնք մասնաւոր, անասուն ընկերութիւններու ծառայութեանը մէջ են:

Ա՛լ չենք հաւատար այս անձուկ եւ սխալ գաղափարներուն, որոնցմով կը պնդեն թէ գործ մը յաջողցնելու համար պէտք է ամէն բանէ առաջ անոր մէջ ուղղակի շահ ունենալ: Արդարեւ չկայ բան մ'որ այնքան անձնական չըլլայ որքան արդի արհեստագործութիւնը: Մենք ընդհակառակը կը պնդենք որ մասնաւոր արհեստագործութիւնները մեծ տէրութեան վարչաճիւղերու փոխակերպելը սա մեծ առաւելութիւնը պիտի ունենար որ ամէն քաղաքացի պիտի դառնար տէրութեան պաշտպան մը, հսկող մը, ամէն օրուան համարառումը:

Ի՞նչո՞ւ քաղաքացիները պիտի ըլլային պետութեան կամ համայնքին պաշտօնատարները, եւ կը ծիծաղին՝ այս գաղափարին վրայ: Ինչո՞ւ չէ, կը խնդրեմ: Աւելի ազէկ չէ՞ պետութեան պաշտօնատար ըլլալ քան թէ գրամատէրներու ընկերութեան մը ծառան: Ի՞նչ գեր կը խաղայ ուրեմն գործաւորը՝ արդի արհեստագործութեանը մէջ: Միթէ չարժամ մեքենային ծառան չէ՞ նա՛: Չճանչնար այն կամ անոնք, որոնց համար կ'աշխատի, եւ անոնք՝ որ կը վարեն գործարանը կամ ածխահանքը, նմանապէս թուշակաւուներ են:

Ի՞նչ մնայ այն խնդիրը գիտնալ թէ առաւելութիւն պիտի գոյանար ժողովուրդին համար իրերու այս նոր վիճակէն:

Յայտնի է որ ասիկայ տարակոյս չկրնար վերցնել:

Ընդհանրապէս երբ գրամատէրները կը սարքեն գործ մը, չէ թէ որովհետեւ նուիրուած են երկրին, այլ ստակ շահելու համար: Իրենց նշանաբանն է—վնասել որքան կարելի է շահ քիչ, եւ ծախել որքան կարելի է շահ սուղ:

Այս խաղով, կը գրպանեն տարուէ տարի՝

հատոյթի, շահի, վատտակի ձեւով, հարկաւոր միլիոններ: Այս միլիոնները՝ որոնք արդիւնք են գործաւորին չվնասուած աշխատութեան, օգուտ չունին գործաւորներուն, ընդհակառակը:

Արդարեւ այս միլիոնները ճիշտ ապրելու կը ծառայեն գրամատէրներուն ձեռքին մէջ, եւ աւելին կը ծառայէ բարեխաւելու գործիչները, գնելու աւելի կատարելագործեալ մեքենաներ: Այս կայութեան հետեւութիւնն է աւելի մեծ եւ աւելի դիւրին արտադրութիւն մը, եւ իբրեւ հետեւանք, թոշակներու նուազում եւ գործաւորներու ճամբում:

Աշխատողներէն զոյգուած այս միլիոնները կը թոյլատրեն գրամատէրներուն՝ խայտառակ զեղխութեան մը մէջ ապրել, ժողովուրդին ամէնէն զեղեցիկ աղջիկները դիտէ հանել եւ անգործութեամբ ապրիլ, անոնք կը յանդիմանեն իրենց զերիները թէ կը տօնեն երբեմն Սուրբ Երկուշաբթին:

Է՛հ ուրեմն, ընկերվարական գրութեամբ, այս միլիոնները՝ փոխանակ մանելու դրամատէրներու արկղին մէջ, պիտի մնային երկիրին բոլոր քաղաքացիներուն ընդհանուր սեփականութիւնը եւ պիտի ծառայէին անոնց բարեկեցութիւնը աւելցնելու:

Աւելի լաւ հասկցնելու համար ընկերվարական գրութեան առաւելութիւնները, անոնք գրամատէրներէն այսօր շահագործուած մեծ արհեստագործութիւն մը եւ բազմատեղ տսիկայ ինչ ըլլալիքին հետ, եթէ պետութենէն շահագործուէր, օրինակի համար, գետնածուխի արհեստագործութիւնը:

Փետնածուխի հանքերուն շահագործումը կատարուած է մինչեւ այսօր գրամատէրներու ընկերութիւններէն, ստակ շահելու միակ նպատակով: Ածուխը հանել կուտան խոշոր շահ մը բերելու համար: Կը շահագործեն լաւագոյն խաւերը եւ կը ձգեն միւսները, ուրկէ կորուստ Ազգին համար: Եթէ այսօր խնդրոյ առարկայ արհեստագործութիւնը՝ խոշոր շահ չբերեր իր բաժնետէրերուն, գոնէ օրինաւոր վատտակ մը կը ձգէ, մանաւանդ երբ նկատի առնուի որ շատ մը տարիներ շահերը խիստ մեծ եղած են:

Ի՞նչ կը նշմարենք ամէնէն առաջ: Ածխահանքի բանւորը գէշ վճարում կը ստանայ՝ ընդհակառակը, առատութիւն մը կայ գործակատարներու, վերակացուներու, հո-

գաբարձուներու, եղոտ կերպով վարձատրուած: Շահագործումը կը սկսի: Հանուած ածուխը կը ծախուի տակաւոր 12 ֆրանքի, օրինակի համար: Եան անձեր որ կը դնեն այս ածուխը այս գինով եւ զայն նորէն կը ծախեն 22 ֆրանքի, որով տակաւ գլուխ 10 ֆրանք չան, ուրիշ պէտք է հանել փոխադրութեան ծախքերը:

Այս ծախողը ուրեմն կը հարստանայ առանց բան մ'աւելցուցած ըլլալու նախնական արտադրութեան: Սպառողը կը վճարէ միջնորդի մը 2, ինչ որ արժած է 1:

Եթէ ընդհանրապէս պետութիւնը չահագործեր ածխահանութիւնները, աւելի լաւ պիտի վճարէր զործաւորներուն եւ նուազ լաւ հոգաբարձուներուն: Ածուխը՝ անդամ մը հանուելէ վերջ պիտի փոխադրուէր սպառումի զանազան կեդրոնները եւ դրուէր հասարակութեան տրամադրութեան տակ: Փոխանակ ունենալով՝ Պրիւքսէլի պէս քաղաքի մը մէջ, 500 ածուխի մթերանոց, բաշմաթիւ պաշտօնեաներով, ընդհանուր մեծ ծախքերով եւ այլն, պիտի ըլլար միայն պատրաստուած մէկ կամ երկու, եւ տալով վաթսուներէն մինչեւ ութսուն առ հարիւր աւելի քան թէ այսօր:

Ի՞նչ խնայողութիւններ պիտի ըլլուէին: Խնայողութիւն աշխատութեան, յայտարարութեան, ընդհանուր ծախքերու եւ այլն: Եւ ըսելով է որ այսպէս պիտի ըլլար բոլոր արհեստագործութիւններուն համար:

Ասկէ զտու, ջնջելով հազարաւոր անօգուտ միջնորդները, որոնք այսօր կ'ապրին հասարակութեան վնասին, առանց աշխատելու, աշխատութեան բանակը կ'իսով չափ պիտի աւելնար, եւ այսպէս փոխանակ օրական տասներկու ժամ աշխատութիւն պահանջելու գործաւորներէն, հինգ կամ վեց ժամ պիտի բաւէին ամէն մէկուն:

Կարելի է ուրեմն առանց չափազանցութեան ըսել որ եթէ բոլոր զօրաւոր մարդիկ աշխատէին — որովհետեւ աշխատութիւնը պարտականութիւն մ'է եւ ստիպողական պիտի ըլլար բոլոր զօրաւորներուն համար — Վարդիկի ֆիչ պիտի աշխատէին եւ աւելի պիտի ստանային:

Ուրեմն մեր հասկցած ընկերվարական ընկերութեանը մէջ, բոլոր բնակիչները՝ կատարեալ կրթութիւն մը ստանալէ վերջ եւ ունենալով անհրաժեշտ ուժերը, պիտի

ընկերութեան պարտէին օրական հինգ կամ վեց ժամ աշխատութիւն: Այս աշխատութիւնը պիտի վճարուէր կամ գրամով, կամ աշխատութեան փոխարէն թուղթերով, որ պիտի ծառայէին պետութեան կամ համայնքներուն վաճառանոցները երթալ գնելու առարկաներ որոնք անհրաժեշտ են զործաւորին եւ իր ընտանիքին պարէնին:

Բնականաբար պիտի ունենար գործաւորը՝ իր ընտանիքը, իր կինը, իր տղաքները, առտնին կեանքը, որովհետեւ անօգուտ է հոս պատասխանել, այնպէս չէ՞, կ'ընկերուն հասարակաց ըլլալու ծաղրելի տեսականութիւններուն, զորս արդի ընկերվարականներուն վրայ կը ձգեն:

Դ'ւրաւ պ'տի հասկցուի որ կարելի չէ քանի մը էջերու մէջ մանրամասնօրէն ներկայանել ընկերվարական ընկերութեան բոլոր կազմակերպութիւնը: Զկրնար մէկը մինչեւ անդամ նախատեսել ինչ որ պիտի ըլլայ վաղը, ընկերական մ'շափայրը փոփոխութիւն կ'ընելուն:

Մինչեւ հիմայ խօսեցանք միայն պետութեան վրայ: Արդարեւ պետութիւնը պիտի ըլլայ հողին, ներքնահողին (sous-sol), զրամազուիներուն եւ աշխատութեան գործիքներուն տէր: Բայց համայնքները պիտի խաղան իրենց գերը՝ նոր ընկերական կազմաւորութեանը մէջ:

Այսպէս, եթե անհրաժեշտ է տեսնել պետութիւնը որ չահագործէ եւ վարէ արտադրութեան, փոխանակութեան եւ այլն մեծ տէրութեան — վարչաճիւղերը, համայնքները՝ իրենց կարգին, պիտի կրնային ստանձնել սնուցումի պաշտօնը, օրինակի համար, ինչպէս նաեւ հագուստներու եւ բնակարանի գործը:

Օրինակի համար, համայնքը պիտի հաստատէր հայագործարաններ, սրճարաններ, վաճառանոցներ, ուր կարելի պիտի ըլլար հայթայթել ինչ բանի որ մէկը պէտք ունի: Համայնքը պիտի հոգար ուրեմն սնունդը, զգեստը, տեղափոխութեան միջոցները, ինչպէս սակայն Պրիւքսէլ քաղաքը արդէն այսօր ատիկայ կ'ընէ, ջուրին, կազին, ելեքտրականութեան, թաղումի պաշտօնին համար եւ այլն:

Այժմ տեսնենք անհատին գերը ընկերվարական ընկերութեան կադրակերպութեան մէջ:

Ըսե՛նք թէ նոր ծնած է սղայ մը: Սա կը մեծցուի ծնողքէն մինչեւ այն տարիքը, ուր պիտի կարենայ զպրոց երթալ: Հոն պիտի ընդունի անունը եւ մինչեւ անգամ հաղուստ, համայնքին ծախքով, բան մ'որ նպատակաւ պիտի ըլլար շատ սղաքներու տէր ընտանիքի հայրերուն համար, եւ հաւատարակչութիւնը պիտի վերահաստատէր անոնց հետ, որոնք կամ սղայ չունին եւ կամ քիչ ունին: Նախնական դպրոցէն վերջը, սղան պիտի կարենայ ընդունիլ միջնակարգ կամ բարձրագոյն կրթութիւն մը, իր կարողութիւններուն համեմատ, կամ թէ պիտի յաճախէ արհեստագործական վարժարանները եւ հոն պիտի սորվի տեսականը ու գործնականը այն արհեստին որով կը փափագի պարագլի:

Ահաւասիկ նա՛ աշխատելու տարիքը հասած: Պիտի մանէ պետութեան կամ համայնքին մէկ գործատունը, նայելով իր նախադասած արհեստագործութեան: Օրական հինգ վեց ժամ պիտի աշխատի եւ ամէն տասնեակինգ օր պիտի ընդունի իր արտադրածը ներկայացող գումար մը, իր ընկերական պարտքերը գոցուելէն վերջը: Դրամական այս գումարով—մետաղ դրամ ըլլայ կամ թուղթ—պիտի հայթայթէ ինչ որ իրեն պէտք է: Պիտի ամուսնանայ, ունենայ սղաքներ, պիտի ունենայ իր տուն տեղը: Որոշեալ տարիք մը հասնելով, ա՛լ չպիտի պարտաւորի աշխատիլ եւ պիտի ընդունի թոշակ մը, ինչպէս որ պետութիւնը այսօր կը շնորհէ անգործ՝ թուրքերին պտուղնոց դինականներուն, որոնք բան մը չեն արտադրեր:

Բնականաբար պիտի ըլլան քաղաքացիներ որոնք չպիտի ծախսեն ինչ որ պիտի չահին: Պիտի կրնա՞ն խնայել իրենց աշխատութեան արդիւնքը եւ ի հարկին դայն թողուլ իրենց զաւակներուն: Այս առարկութեան մէնք կը պատասխանենք. Ինչո՞ւ չէ: Այդոր մէջ բնա՛ւ վտանգ չկայ: Չպիտի ըլլան նորէն, ինչպէս որ կը պնդեն, հարուստներ եւ աղքատներ: Հարստքիւնը վստակաւոր է միայն այն ատեն երբ ուրիշին աշխատքիւնը շահագործելու կը ծառայէ: Հոս այդպէս չպիտի ըլլար, քանի որ արհեստագործութիւնը, անհատական վաճառականութիւնը, արտադրութեան միջոցներուն անհատական սեփականութիւնը ա՛լ

գոյութիւն չպիտի ունենային:

Նորէն կրկնենք. հաւաքականութեան ձեռքին մէջ կեդրոնացնելով աշխատութեան բոլոր ճիւղերը, կ'ուղղենք ընկերական անհաւասարութիւնները:

Երբոր մէկը հիւանդ է, արդար եւ մարդկային չպիտի ըլլար որ քաջատողջները վճարէին բժիշկին: Լա՛ւ ուրեմն, ընկերվարութիւնը ուրիշ բան մը չէ բայց եթէ համերաշխութեան այս գաղափարին կիրարկութիւնը՝ ընկերական կեանքին ամբողջութեանը համար:

Արդարեւ, այսօրուան օրս առնուած անհատապաշտական, ետսիրական դատարարկութեամբ, եւ նախապաշարունակութեամբ գտնուած թեմա գործ ամէնքս ալ ունինք, քիչ մը դժուարութիւն կը կրենք հասկնալու ընկերութեան ուրիշ կազմակերպութիւն մը. բայց, աւելի լայնարձակ եւ աւելի ճիշդ դատարարկութիւն մը պիտի կարենայ խիստ դիւրութեամբ յաղթանակել այս ետսիրական նախապաշարունակներուն:

Համերաշխութիւնը, ասկէ զատ, արդէն խորունկ արմատներ ձգած է ժողովուրդին մէջ: Փոխադարձ օգնութեան ընկերութիւնները չէ՞ որ նպատակ ունին հիւանդներուն օգնութեան հասնելու հանդանակութիւններով: Բռնողուի արկղները չե՞ն վճարել միթէ անգործ միացած գործաւորներուն վնասի հատուցում մը: Գործակցական ընկերութիւնները չէ՞ որ իրրեւ արդիւնք ունին անօգուտ միջնորդները ջնջել: Լաւ ուրեմն, ըսենք նորէն, ընկերվարութիւնը ուրիշ բան չէ բայց եթէ այս գաղափարներուն գործադրութիւնը՝ բոլոր անտեսական կեանքը ընդգրկող հողի մը վրայ:

Ամփոփենք այժմ ցոյց տալով թէ ի՞նչ պիտի ըլլար՝ ընկերվարական ընկերութեան մէջ, պետութեան դերը, համայնքին դերը եւ անհատին դերը:

Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Տէր պիտի ըլլար հողին, ներքնահողին եւ աշխատութեան մեծ գործիքներուն:

Պիտի կազմակերպէր, իրրեւ տէրութեան մեծ վար սճիւղեր, երկրագործութունը, անխահանութիւնը, մետաղագործութիւնը, հիւսուածագործութիւնը եւ այլն. մէկ խօսքով, ամէն ինչ որ հիմալ մեծ ար

հետագործութեան մէջ կ'իյնայ, կամ պիտի իյնայ ապագային.

Երկաթուղիներով, ջրանցքներով եւ այլն փոխադրութիւնը.

Բարձրագոյն կրթութիւնը.

Միջազգային փոխանակութիւնները.

Ապահովութիւններու, ձեր գործաւորներուն համար հանգստեան թոշակներու պաշտօնները:

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ը

Պիտի կազմակերպէր իրեն տէրութեան վարչաճիւղեր.

Բնակութիւնը.

Մուսուրը.

Նախնական, միջնակարգ եւ արհեստական կրթութիւնը.

Բժշկական եւ դեղագործական պաշտօնը.

Մերձակայ երկաթուղիներու, հանքակառքերու, կառքերու եւ այլն երթեւեկութիւնը.

Ջուարծութիւնները եւ զբօսանքները, ինչպէս թատրոններ, նուագահանգէսներ, սրճարաններ, մատենադարաններ եւ այլն.

Արտադրութիւնը եւ փոխանակութիւնները:

Ա Ն Հ Ա Տ Ը

Պիտի պարտական ըլլար պետութեան կամ համայնքին՝ օրական դործ մը, որուն ժամերուն թիւը պիտի որոշուէր գործին պահանջումներէն. աւելի յոգնեցնող կամ ամէնէն զարչլի արհեստներուն համար, առաւելութիւններ պիտի կրնային արուիլ անոնց որոնք պիտի կատարեն զանոնք.

Իր թոշակին փոխարէն—ըլլայ դրամ կամ աշխատութեան թուղթ—գործաւորը պիտի կրնար իրեն համար ստանալ, համայնքի վաճառանոցներուն մէջ, հաց, զգեստ եւ սպառումի, բնակարանի, կահկարասիներու եւ այլն վերաբերեալ բոլոր առարկաները.

Հիւանդութեան պարագային մէջ իրաւունք պիտի ունենար բժիշկի եւ դեղերու, փնտի հատուցումէն զատ.

Ծերութեան կամ աշխատելու անկարող պարագային մէջ, իրաւունք պիտի ունենար թոշակի մը.

Այրիները եւ որբերը պիտի ըլլային պետութեան կամ համայնքին վրայ, նայելով թէ ամուսինը աշխատած էր մէկուն կամ միւսին համար.

Իրաւունք պիտի ունենար նախնական, երկրորդական եւ արհեստական կրթութեան, եւ գլխաւորապէս կանոնաւոր կեանքի մը բոլոր պէտքերուն.

Պիտի ըլլար տէր իր չարժակուն առարկաներուն, կահերուն, զգեստներուն, եւ այլն, եւ պիտի վայելէր միւս քաղաքացիներուն հաւատար ատոմանով հարստութիւնները եւ հասարակաց առաւելութիւնները, որոնք պիտի աւելնային ընկերութեան միջոցներուն հետ:

Գ.

Եր մնայ քննել այժմ թէ ի՞նչպէս պիտի հասնին ընկերութեան այս կազմակերպութեան:

Խնդիրը պիտի կրնայ լուծուիլ յանկարծ, այսօրէն վաղը: Ոչ, ակնթարթի մը մէջ չփոխուի ժողովուրդի մը անտեսական կեանքը, ինչպէս որ պուրժուական ընկերութիւնը չհիմնուեցաւ այսօրէն վաղը, 1789ին:

Գործաւորական դասերուն՝ ընկերութեան կառավարութեան գլուխ անցնիլը կրնայ կատարուիլ երկու կերպով—կամ խաղաղութեամբ կամ յեղափոխութեամբ:

Առաջին պարագային մէջ, ընկերութեան կերպարանափոխութիւնը պիտի կատարուի ինչ չափով որ կարելի ըլլայ:

Ընկերավարական պետութիւնը պիտի սկսէր տէր դասնալով երկիրին մեծ արհեստագործութիւններուն, կալուածատէսներով հասարակութեան օգուտին համար, անոնց արդի սեփականատէրերը: Այս սկզբունքը արդէն ընդունուած է արդի օրէնքներէն:

Բնականաբար այս սեփականատէրերուն փնտր պիտի արուի որոշեալ պայմաններով, կամ թեթեւ շահ մը բերող հատոյթի ձեւին տակ, կամ մինչեւ սեփականատէրին մահը վճարելի տարեկան հատոյթով մը:

Երկրագործական սեփականութիւններուն գալով, ինքնին կը հասկցուի որ պետութիւնը միայն մեծ շահագործումներուն ձեռք պիտի նետէր եւ չպիտի դպչէր պզտիկ կամ միջին սեփականութիւններուն, զոնէ սու-

ժամանակեայ կերպով եւ մինչեւ որ այս պզտիկ կամ միջին սեփականատէրերը համոզուին հարստութեան ընկերացման առաւելութիւններուն:

Այն պարագային երբ ընկերվարական գործաւորները յաղթող դառնային սաստիկ յեղափոխութենէ մը վերջը, միջոցները կրնային փոխուիլ, եւ կրնային աւելի արմատական ըլլալ հանդէպ հողի, գործարաններու, ածխահանքերու եւ այլն. մեծ սեփականատէրերուն:

Ասկէ դատ, պատմութիւնը լի է այս սեռակ օրինակներով: Միթէ, օրինակի համար, իրլանտական եւ անգղիական հողին արդի սեփականատէրերուն նախնիքները չգործածեցին եւ չարաչար չը գործածեցին անասնական ուժ՝ այս հողին տէր դառնալու համար: Եւ հողին արդի յաւելեալ—արժէքը պարտական չէ՞ միթէ գէպքերու ամբողջութեան մը, որոնց այս սեփականատէրերը մնացին բոլորովին օտար:

Պիլժիգայի, Փրանսայի մէջ, եւ ուրիշ տեղ, չէ՞ որ սեփականութիւնը կրեց խոր կերպարանափոխութիւններ: 1789 ին աղնուականները եւ կղերները չղրկուեցան կալուածէ ժամանակին պուրժուաններէն: Միթէ մեր օրերուն մեծ սեփականատէրերուն հարստութիւնը չունի՞ իբրեւ սկիզբ՝ գայթակղիչ գեղձումներ—ազգային ինքնություն վաճառումը, օրինակի համար:

Ինչ որ անգղիացի լորտերը եւ ամէն երկիրներուն պուրժուանները ըրին մէկ քանիներուն չահին համար, գործաւոր հատարակութիւնները չպիտի՞ կրնային զայն ընել ամէնուն չահին համար:

Ճշմարտիւ, եւ եթէ ընկերական կերպարանափոխութիւն մը երբէ՞ք օրինաւոր է եղած, ան ալ ճիշդ այն է:

Կը կարծենք թէ ցցուցինք նախորդ տողերուն մէջ,

Թէ ընկերութեան արդի կազմակերպութիւնը անիրաւ է եւ թէ ստիպողական է զայն փոխել:

Թէ ընկերվարական լուծումը կարելի է եւ թէ այս միակ լուծումը կրնայ ամէնուն հայթայթել բարեկեցութիւնը եւ ազատութիւնը:

Թէ ընկերական կերպարանափոխութիւն մը հետզհետէ հարկ կըլլայ եւ թէ այն պիտի

կատարուի խաղաղութեամբ եթէ պուրժուանները ուզեն հարկ եղած զիջումները ընել, եթէ ոչ յեղափոխութեամբ, եթէ արդի սեփականատէրերը ուզեն դիմադրել բարենորոգումներուն որոնք անհրաժեշտ դարձած են հասարակաց բարիին համար:

Օգոստ. 1887

ԻՆՉ Է ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԴԵՐՈՒ ԵՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՄԷՉ

(Շար. նախորդ քիւէն)

Միւս կողմէ մենք կը գտնենք Ռոմենեսի մօտ հետեւեալը. «բանականութիւնը—ընդունելով որ սա նշանակէ միջոցի եւ արդիւնքի մէջ եղած կապի հասկացողութիւնը—ենթակայ է զարգացման եւ կը ներկայացնէ զարգացման զանազան աստիճաններ. եւ ես իբրեւ սխալ կը նկատեմ—ամենանշանաւորը՝ որ երեւցած է հոգեբանութեան մէջ—այն ենթադրութիւնը թէ կայ բնութեան ո՛ր եւ է զանազանութիւն այդ յատկութեան մէջ, երբ սա կը գործադրուի ամենաբարձր վերացականութիւններու վրայ կամ թէ երբ կը գործադրուի ամենապարզ զգայական ճանաչողութիւններու (perception) վրայ»:

Լօքը կ'ընդունի իբրեւ զանազանութիւն մարդերու եւ կենդանիներու մէջ վերայականութեան ընդունակութիւնը, զաւանելով մի եւ նոյն ատեն հակառակ Տէքսթրի թէ անասունները ունին բանականութիւն: Տեսնենք այժմ թէ իրա՞ն է Ռոմենեսի այն դատողութիւնները թէ բանականութիւնը եւ վերացականութիւնը մի եւ նոյն ընդունակութեան զանազան աստիճանները կը ներկայացնեն: Եթէ այո՛, այն ատեն պարզ տրամաբանութիւնը ցոյց կուտայ որ հոգեկան յատկութիւններու աստիճանական զանազանութիւնը չկրնար արեւատալու բաժնել այդ երկու անբաժան աշխարհները: Այլ եթէ ընդհակառակը մենք տեսնենք որ կենդանական զարգացման զանազան աստիճաններու մէջ, իրարու ետեւէ կը յայտնուին բանականութեան զանազան ձեւերը եւ թէ վերջապէս մարդերու մէջ բանականութիւնը կը հասնի վերացականութեան, այդ ամէնը

մեզ կը ցուցնէ որ հոգեբանական աշխարհին մէջ ալ մարդը կը ներկայանայ ընդհանուր ընտանիքի ամենազարգացած անդամը:

Մենք բանականութեան կուտանք հետեւեալ սահմանը եւ այդ միաբով ալ պիտի գործածենք—մի յատկութիւն կամ ընդունակութիւն որուն շնորհիւ մենք կրնանք նպատակներու, միջոցներու եւ արդիւնքներու մէջ եղած կապերը գուշակել: Նա կը պարունակէ նպատակի եւ միջոցի յարաբերութիւններուն մասին գիտակցական ծանօթութիւն եւ կրնայ ի գործ դրուիլ ամէն նոր պարագայի մէջ ինչպէս անհատի նոյնպէս եւ ամբողջ ցեղի կողմէ:

Ամէնուն պատահած կ'ըլլայ հարկաւ նայիլ ո՛ր եւ է առարկայի մը վրայ կամ լսել ո՛ր եւ է բան մը, առանց տեսնելու եւ լսելու որոշ կերպով, այլ միայն զգալով ո եւ է անորոշ տեսողական կամ լսողական գրգռում մը (irritation): Այդ գրգռութեան մէջ մարդու միաբը զբաղուած ըլլալու է ուրիշ մտածումներով եւ մտածելու կարողութիւնը կամ ընդունակութիւնը զբաղուած ըլլալով անոնցմով չզբաղիր վերելը յիշուած գրգռումներով ու այսպէսով գրգռումները չեն դատարարուիր որոշ կերպով որպէս զի մենք ճանչնանք թէ այդ տեսողութեան գրգռման աղբիւրը գի՞րք է թէ կանթեղ, կամ թէ մեր լսածը ե՞րբ է թէ երաժշտութիւն: Բայց երբ միաբը կը զբաղի այդ գրգռումներով, մենք անմիջապէս կ'որոշենք գրգռող աղբիւրը եւ զայն կը զտտենք իրեն նմաններէն: մեր այս ընդունակութիւնը՝ որ կը ստացուի ինչպէս անձնական փորձերէ նոյնպէս եւ նախորդներու փորձերէ, կ'անուանենք ճանաչողութիւն: Մեր ուղեղը՝ արտաքին աշխարհէն կը ստանայ գրգռումներ որոնք դատարարուելով մեզ կուտան ճանաչողութիւններ: Ճանաչողութիւնը ունի իր զարգացման աստիճանները: Նա կը սկսի պարզ եւ սակաւաթիւ գրգռումներէն եւ ապա քիչ քիչ ընդունակ կը դառնայ պարունակել աւելի բարդ եւ բազմաթիւ գրգռումներ: եւ երբ ճանաչողութեան զարգացումը կը հասնի այն աստիճանին որ կը սկսի դատարարել եւ ճանչնալ իրերու հետեւանքները, Նա կը գտնայ արդէն բանականութիւն, կամ սովորական լեզուով խելք: Այնպէս համարենք թէ, օրինակի համար, ես նստած եմ մութ սենեակ մը, ուր կը

վառեմ կանթեղը եւ կը տեսնեմ որ սենեակը կը լուսաւորուի: Եթէ իմ գիտակցութեան մէջ այդ փոփոխութիւնը չբացատրուի այլ միայն անկողի իրերու զանազան ճանաչողութիւններ, այդ տեղ վեւ բանականութիւն չկայ: Բայց երբ միւս նոյն երեւոյթը մի քանի անգամ կրկնուի եւ իմ ճանաչողութեան ընդունակութիւնը այնքան զարգանայ որ ես մութ սենեակի եւ լոյս սենեակի ճանաչողութիւններէն պատկարով ըլլամ այդ փոփոխութեան պատճառները պահազանել, հասկնալ որ աստիկայ կառարուեցաւ լոյսի շնորհիւ, զա (ճանաչողութիւնը) արդէն կը գտնայ բանականութիւն: Ես հիմայ գիտեմ լոյսի արդիւնքները եւ կրնամ զայն գործածել ուղած կարելի նպատակի համար: Բանականութիւնը՝ յարաբերութիւններու եւ հետեւանքներու ճանաչողութեան վրայ է հիմնուած: ուրեմն նա ճանաչողութեան ամենաբարդ ձեւն է:

Ես աշխատեցայ ցոյց տալ թէ ինչպէս գրգռումը առաջ կը բերէ ճանաչողութիւնը եւ սա՝ բանականութիւնը զոր հոգեբանները կ'անուանեն մակածութիւն (induction):

Աւելորդ կը համարիմ օրինակներ մէջ բերել կենդանիներու կեանքէն, ցոյց տալու համար թէ այդ հոգեբանական յատկութիւնները ունին անոնց մէջ: Գրգռումը արդէն յատուկ է ամէն կենդանական բջիջի՝ ձուկերը կրնան պարզապէս դասել մէկ առարկան միւսէն եւ արդէն նախապէս կարելի է ըսել որ աւելի զարգացող կենդանական անասններու մէջ պէտք է գտնուի եւ բանականութիւնը: Մենք կը ջանանք այժմ աւելի մանրամասնօրէն կանգ առնել այդ հարցին վրայ:

Բանականութիւնը՝ որ մանաւանդ քաղաքիթուած մարդկութեան ձեռքին մէջ անկող ուժ մ'է դարձած, որ կրնայ դատարարել ամենէն բարդ յարաբերութիւնները եւ հետեւանքները, ունեցած է իր սաղմային վիճակը եւ զարգացման աստիճանները որոնք հասցուցած են մարդկութիւնը ներկայ բարձրութեան:

(Շարունակելի)

[ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՄ ԵՒ ՓՈԼԱՆԱՏՈՒՄ]

Огговорникъ:: Никола Д. Драгулевъ